

Թիւ 11342  
Յունիս 30, 1964

Բարեշնորհ  
Շահան Արկ. Սեւյոնքեան  
Հոգեւոր Սատակարար  
Փիցոպըրկի Նորակազմ Համայնք

Սիրելի Տօքթ. Սեւյոնքեան,

Փիցոպըրկի մեր Նորակազմ Շխական Խորհուրդի մասին Ձեր Յունիս  
12 թուակիր Նամակը Ներկայացուցինք Թեմական Խորհուրդի Յունիս 26ի  
Նիստին:

Ժողովը ուրախութեամբ ընդակացաւ որ Ձեր տարած նուիրեալ աշխա-  
տանքներուն շնորհիւ Փիցոպըրկի մէջ կազմուած է առժամեայ Շխական Խոր-  
հուրդ Մը:

Այսու, Ձեզի կը յայտնենք Պատուարժան Թեմական Խորհուրդի գո-  
հունակութիւնը եւ մեր Հայրական օրհնութիւնները Ձեր կատարած բարի  
գործին համար:

Վստահ ենք որ դուք, իբրև Հոգեւոր Սատակարար, միշտ պիտի հըս-  
կէք այդ Նորակազմ Համայնքի Հոգեւոր կարիքներուն, կատարելով Հոգեւոր  
պաշտամունքները եւ հոգ տանելով տեղւոյն մեր փոքրիկ հոտին կրօնական  
ու ազգային գործերուն:

Նոյնպէս այսու շեզի կը հաղորդենք թէ Թեմական Խորհուրդը յանձն  
առաւ Ձեր ճամրու ծախքի մասնակցութեան համար վճարել 50.00 տոլարի  
գումար Մը:

Մաղթելով Ձեզի Աստուծոյ Վարժատրութիւնը.

Մնամք Հայրական սիրոյ ոռջունիւ  
եւ օրհնութեամբ  
Աղօթարար

ԱԽՈՆ ԱՐՅԵԴԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ Հայոց Ամերիկայի  
եւ Գանատայի

OFFICE OF DR. SH. SEVHONKIAN 1965  
DR. SH. SEVHONKIAN  
DENTIST  
277 WEST END AVENUE  
13 NEW YORK CITY, N.Y.

8 Սեպտեմբեր 1965

Հայոց Ազգային Կուսակցության համար 1965

**Գերանորհ**

Տէր Միոն Սրբազն Արքապիսկոպոս Մանուկեան  
Բարեխնամ Առաջնորդ Ամերիկայի եւ Գանատայի Հայոց  
Ազգային Առաջնորդարան  
680 Սէքնտ Էվընի  
Նիւ Շօրք, Նիւ Շօրք

**Գերանորհ Սրբազն Հայր,**

Հետևեած կարգ մը սեղեկութիւններ են Թիգարկի Հայ  
Եկեղեցոյ Համայնքին Վերաբերեալ :

1964-1965 տարին բոլորու եցաւ՝ Սեպտեմբերին Սայիս ամսական  
առողջական ժամերգութեաններով եւ Պատարագներով։ Զանց առնուեցաւ  
ունի առաջնորդ պատարագ կամ պատարագ առաջնորդի առաջնորդ Հայ Եկեղեցոյ  
Երիտասարդաց Ընկերակցութեան Խմբական Այցը, քանի որ այնքան ալ  
փափառող չէին տեղւոյն Հայերը։

1965-1966 տարեշրջանը պիտի սկսինք Սեպտեմբերի Բ. Կիրակին՝  
Ա. Կիրակին "Լէյպըր Տէյ" ըլլալուն պատճառաւ։ Ներփակեալ նամակներու  
պատճէնները ծխական խորհուրդի անդամներուն, ինչպէս նաև մի քանի մմիս  
առաջուանը նոյն ուղղութեամբ ցոյց կուտան թէ Հանացած եմ պատշաճօրէն  
նկատել տալ կարգ մը սխալներ՝ առանց որ գործը տուժէ։

Ներփակեալ ուրիշ նամակի պատճէն մը կը յայտնէ թէ ծրագրած եմ  
Քալիմօրնիա գործել մի քանի ամիս, ուստի եւ հաւանարար պիտի ստիպուիմ  
բացակայիլ Դեկտեմբերի եւ Ցունվարի մեզի ընծայուած։ Նպիսկոպոսական  
Եկեղեցին որբածելու սրանչելի պատեհութենէն։ Հարց կը ծագի ուրեմն  
թէ ինչ պէտք է ընծայութիւնը 20 շնչարի։ Բայց որովհին ջնշել ամսօրեայ ժամեր-  
գութիւնները թէ ոչ կանոնական որովհինք պահել հակառակ իմ բացակայութեան։

1964-1965 Տարեշրջանի ընթացքին ամենափայլուն օրը եղաւ Զեր  
այցելած օրը։ Արդիօք կը խորհիք այս տարի եւս այցելել, եւ երբ  
լաւ կ'ըլլայ հանիսաւ գիտնալ ու բար այնմ ծանուցանել։ Պատշաճ կերպով։

Սայիսին մեր ծրագրած Անդամական Ընդհանուր ժողովը՝ նախագահու-  
թեամբ Հոգեշնորհ Տէր Եղիշէ Վարդապետ Կիպիրեանի, կարելի չեղաւ ամրող-  
ջացնել։ Յարմարագոյնը պիտի ըլլալը պայն ամբողջացնել յառաջիկայ  
Հոկտեմբերին։ Առաջդ կը խնդրեմ որ բարեհաճիք ճշգել թէ ով պիտի  
ուզէիք որ ըլլայ Առաջնորդարանի ներկայացուցիչը սոյն ժողովին։

1968-1964 տառեշրջանի համար, 9 անդամ 80 Հաւասար 270 ֆոլարի  
ճանապարհածանսիս մէկ նորորդը ստացած եմ Առաջնորդարանէն եւ Մէկ նորորդն  
ալ Բիցցըրկի Հայ Համայնքէն։ Խոկ 1964-1965 տարեշրջանի 9 անդամ 90  
Հաւասար 270 Ֆոլարի ճանապարհածանսէս զեռ ոչինչ ստացած եմ՝ ոչ Համայնքէն  
եւ ոչ ալ Առաջնորդարանէն։ Ուրեմն թէ Առաջնորդարանը եւ թէ Համայնքը  
Բիցցըրկի Խննուունական Ֆոլար պարտական կը նկատեմ ինծի, մնացեալ  
Խննուունս ալ ես իմ կողմէ նույիրելով։

Եթէ Առաջնորդարանը ունի Հայերէն ընթերցանութեան գրքեր սկսնակներու համար, շատ-լաւ կ'ըլլայ 10-12 օրինակ նուիրել Բիշպըրկի Հայերէնի աշակերտներուն համար:

Կանխայաց շնորհակալութեամբ եւ

Որդիական ակնածանօք,

Մատչելով ի Սուրբ Աշն յեր՝

Durham Myosotis

## ՀԱՅԱՆ ԱՆԴՐՈՆԻՔԵԱՆ

Հւետմն կը Խնդրեմ որ քառեամբ ի՞նչ հաջողակ ցեր  
այսօնական վայեցածումը սոյն հաշմին ուղարձ հասցւներն ալ  
հուսամ սուրեւ : Շերեւ լաւ նկատք խիբականին առա առանձինն  
հելլոզին ուղարկել :

Խոհեմ շնորհուալութեամբ եւ

Օքախկան ակնածանօթ,

Դարչելով ի Սուրբ Աշխ ցեր՝

Հակոբ Այօվոն, Խոյսու

Տաճար Ակադեմիան պահպանութեամբ

Հ.Հ. Խոյսինց Շնորհած է :

Mr. Martin Tellalian  
4143 Branding Place  
Allison Park, Pa.

Mr. Mike Sakoian  
1706 Wallace Ave.  
E. Mc Keesport, Pa.

Mr. Mardiros Mezian  
6114 Dalmatian Drive  
Bethel Park, Pittsburgh, Pa.

Mr. Joseph Jacobs  
274 Sleepy Hollow Rd.  
Pittsburgh 34, Pa.

Mr. Kooradian  
939 Hazel Ave.  
Ambridge, Pa.

Dr. Shaham Sevhonkian  
216 Chesterfield Rd.  
Pittsburgh 13, Pa.  
Phone: MU 1-0131

11 Ապրիլ 1963

Գերապատիւ

Տէր Սիռն Սրբագան Սրբեակի սկոպոս Խաչեակեան  
Յաղեինամ Առաջնորդ Կմերիկայի Հայոց  
ի Նիւ Եօրք

Գերապատիւ Սրբագան Հայը,

Կը ժութամ Ահեթսպուրկի Հայ չամայնքին կողմէ յայտնել մեր  
ամենախորին Երախտագիտութիւնը այն սքանչելի կարգադրութեան համար  
որ բառեհաճեցաք ընել որով Ծաղկագառդի օրը կոցանք ունենալ թէ  
Սուրբ Պատարագ եւ թէ զոնբացէքի առարողութիւն։ Երախտապարտ ենք  
նաեւ Տէո Վրբանէս լւագ Թահանայ Ժամագեանի որ բառեհաճեցաւ գալ՝  
ոչ միայն Կիրակի օր այլ նաեւ անկէ մէկ երկու օր առաջ՝ կառելի  
դարձնելով Շնորհացէքի մործերը եւ Իշխանքի ու մասի պատրաստութիւն,  
որոնք եղան այնքան հաճելի նորութիւններ պիթսպուրկի ծարաւի  
հոգիներուն համար։

Դերկանեուու ընդհանուր Թիւն Էր Վաթսուն հոգի, որոնցմէ  
մեծամասնութիւնը լոււը չաղորդութիւն ստացան, եւ ի Վերջոյ  
Տէր Հայոց Բարմ Դշխառհներ եւ մաս բաժնեց բոլորին։

Եկեղեցին Վերջ համեստ ընդունելութիւն մը տեղի ունեցաւ  
փոքրիկ յայտագործ մը եւ Տէր Հայոին բարի գալուստի ուղեոծնեով,  
Անգլիան թէ Հայերէն։

Առլորովին ցրուելէ առաջ՝ շեշտեցի անհրաժեշտութիւնը  
Ներկայացուցչական կազմի մը։ Առաջարկուեցաւ եւ բոլորը համաձայն  
եղան ձեռամբարձ քուեարկութեան։ Հետզհետէ ընտրուեցան  
Մարտըն Շէլլալեան։ Որ առաւելագոյն գաղտնի քուէով գանձապետ  
ընտրուած էր առդէն 15 ամիս առաջ։ Իրայք Սագօնան որ Երկրորդ  
առաւելագոյն զուէ ստացողն էր այն ատեն իսկ։ Իրարտիբոս Միքան  
որ Փետրվար 1962էն ի վեր իբր դպիր շատ օգտակար եղած էր  
զօգէֆ Ճէյքըս։ Որ թէեւ լիբանանցի սակայն կինը Հայ եւ առաջին  
օրէն իսկ վեր իր Հայ կնոջմէն աւելի փարած է մեր Եկեղեցական  
շարժումին եւ ներկայ եղած միշտ բացի եռոք գործով կը բացակայէր  
քաղաքէն։ Հինգերը Բեկնածուն էր ո. Հայկագ Ղահանեան, որ  
առաջինը եղած էր Հանգանակութեան չգոյութեան ատաճառաւ ինքնաբուռն  
նուի բատուռտեանց շարժումը սկսող։ Սակայն, թէ մտադիր ըլլալով  
Քալիմօնիա փոխադուրի եւ թէ իր տարի քը շեշտելով ինդոնց իր  
քուները կեղոնացնել յաջորդ Բեկնածուին վրայ՝ յանձին ու  
Դուքատեանի՝ որ եւս ընտոռուեցաւ։

Ուրեմն կը խնդրեմ ոք բարեհաճիք ինձ հաղորդել ցեր  
պաշտօնական վաւերացումը սոյն կազմին որոնց հասցներն ալ  
կուտամ ստորեւս շերեւս լաւ նկատէք խմբականէն ճատ առանձինն  
եռկտողներ ուղարկել :

Արկին շնորհակալութեամբ եւ

Որդիական ակնածանօք,

Թատչելով ի սուրբ Աջն ցեռ՝

Հակոբ Մայօքփիք, Արքական

Դահան լիեւ յօնքեան լահոկաւագ

3.9. Հասցները հետեւեալ նեռն են.-

Mr. Martin Tellalian  
4143 Branding Place  
Allison Park, Pa.

Mr. Mike Sakoian  
1766 Wallace Ave.  
E. Mc Keesport, Pa.

Mr. Mardiros Mezian  
6114 Dalmatian Drive  
Bethel Park, Pittsburgh, Pa.

Mr. Joseph Jacobs  
274 Sleepy Hollow Rd.  
Pittsburgh 34, Pa.

Mr. Mooradian  
939 Hazel Ave.  
Ambridge, Pa.

Dr. Shahen Sevhonkian  
216 Chesterfield Rd.  
Pittsburgh 13, Pa.  
Phone: 1U 1-0131

*(My way to)*

April 11, 1963

Mr. N. Tellalian, Mr. V. Sakoian, Mr. V. Vexian,  
Mr. J. Jacobs and Mr. Koeradian

Members of the Board of Trustees of the  
Armenian Church Community in Pittsburgh  
Pittsburgh, Pa.

Gentlemen:

I wish to congratulate all of you for your being elected unanimously as the members of the Armenian Church Community(B.of T. of Pittsburgh on Sunday April 7, 1963 at the Dining Hall of the Episcopal Church at 5801 Hampton, Pittsburgh.

The Armenian word for Board of Trustees is HOKAPARTSOO, which means bearing the responsibility. As such, I do not have the least doubt about your being the right man in the right place, since you have been bearing the responsibilities ever without being elected.

Your election will surely appear in our Community News of April, the Original of which will be prepared on Sunday or Monday, April 14 or 15. It is always customary and preferable to announce the special offices held by each, together with the announcement of the election. To do this we need full attendance. Had it not been for the absence of Mr. Tellalian, we could have done that the same day.

So, I invite you all to be my guest at a dinner on Sunday April 14 at 5.30pm in the University of Pittsburgh, Scaife Hall Cafeteria. I realise you do have other responsibilities on that same day, so we can have our very short meeting right after our dinner, and be through within one hour altogether.

I contacted Mr. Sakoian and he said Friday, Saturday and Sunday are the convenient days for him. For Mr. Vexian, Friday and Saturday are very busy days, so he concluded that Sunday would be the most convenient.

May I emphasise again the necessity of full attendance. So, in case of absence, please inform everybody and we can consider the same invitation for the next Sunday.

Respectfully yours

Dr. Shahen Sevhonkian

Sh. Shahen Sevhonkian (Deacon)

Թիւ 7017  
Մայիս 26, 1963

Բարեցնորդ  
Տահան Սարկաւագ Սեւյօնքեան  
Փիթսպըրկ.

Սիրեցի Տահան Սարկաւագ,

Առաջնորդ Սրբազան Հայրը ստացած է Ապրիլ 11 թուակիր Զեր  
Նամակը, ի մասին Ներկայացուցչական Կազմի մը Հաստատման։

Նորին Սրբազնութիւնը շատ զոհ եղաւ իմանալով որ Արժ. Տ.  
Կրթանէս Աւագ ՔՇՆ. Փափազեան Վերջին անգամ Փիթսպըրկ իր այցե-  
լութեան առթիւ, Դունքացէտի արարողութեամբ ու օարողախօսութեամբ  
միահիմարած է տեղւոյզ հաւատացեալ ժողովուրդը։

Առաջնորդ Սրբազան Հայրը կը գնահատէ Զեր տարած Նուիրեալ  
աշխատանքը, քայլ պատահական ժաղովի մը մէջ, Եռումբարձ բուժաբ-  
կութեամբ՝ Զեր ընարած կազմին Հաստատումը օրինական չի նկատեր։  
Որովհետեւ, ըստ Թեմական Պանոնադրութեան տրամադրութեան, նաև  
պար է որդեգրել անդամագրութեան կերպը, անսա պաշտօնական հրա-  
ւերով ու Առաջնորդարանէն այդ նպատակով որկաւած նկեղեցականի  
մ. Նախազահռութեամբ պէտք է ժողով գումարել, տրառու անդամնե-  
րուն իրաւասութիւնը ճշգել, Ընտրութական Յանձնաբումբի մը կողմէ  
Միական Խորհուրդի անդամոց թեկնածուներու քանկ պատրաստել եւ  
այդ տանկին Վրայ ընտրութիւն կատարել։

Նորին Սրբազնութեան յանձնաբարութիւնն է որ դուք շա-  
րունակէտ, իրեւ Սարկաւագ, պարբերական արարողութեանց Համար  
կարագութիւն ընկալ, մինչեւ որ կարելի ըլլայ օրինական կերպով  
Միական Խորհուրդ մը կազմելու եւ զայն ենթարկել Առաջնորդինուն  
թեմական Խորհուրդին առ ի վաւերացումն։

Զայն Հաղորդելով Զեր սիրելիութեան առ ի գիտութիւն եւ  
Մաղթելով յաջողութիւն նկեղեցանուէր Զեր աշխատանքներուն մէջ։

Մնամ խօցին յարգանօք

Առաջն Սանուէլեան  
Դիւանապետ



Diocese of the Armenian Church  
of America

ԱՐԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՑԻ

ՍԻԾՆ ԱՐՔԵՊԻԿՈՎՈՍ ՄԱՆՈՒԿԵԱՆ  
Առաջնորդ

630 SECOND AVENUE, NEW YORK 16, N.Y.

★ MURRAY HILL 6-0710

Archbishop Sion Manoogian, Primate

Թիւ 11273  
Մայիս 21, 1964

Բարեշնորհ  
Տահան Սարկաւագ Սեւյոնցեան  
Հոգեւոր Մատակարար Փիթսպէրկի Նորակազմ Համայնքի

Միրելի Տահան Սարկաւագ,

Այսու կու զանց Զեզի Հաղորդելու թէ՝ Արժանաշնորհ Տ. Կրթանէս  
Աճագ ԶՇՆՅ. Փափազեան, ըստ մեր յանձնարարութեան, Կիրակի, Ապրիլ 5ին,  
այցելած է Փիթսպէրկ եւ Ս. Պատարագ մատուցած ու նախազահած է Համայնքի  
Նորակազմ անդամական ժողովին, եւ զրաւոր մեզի Ներկայացուցած է առ-  
ձամեայ Սիսկան Խորհուրդի ընտրութեան արդիւնքը:

Թեմական Խորհուրդը, իր ամսոյս 20ի նիստին մէջ նկատի առաւ  
հարցը, եւ տեսնելով որ մեր Թեմական հանձնադրութեան արամադրութիւննե-  
րը յարգուած են, որոշեց հաստատել առամեայ Սիսկան Խորհուրդի կազմը,  
ըստ Հնուեւեալին.-

Ցիկին Սթելա Սագտեան, Ցիկին Միքուն, Սարկաս Մեծեան,  
Միջըստ Ալթունեան եւ ծօզէն ծէզըպս:

Ուրախ ենք Զեզի պաշտօնապէս Հաղորդելու այս պարագան, զնաբան-  
լով Զեր տարած հաւատարիմ աշխատանքը՝ Փիթսպէրկի Համայնքի կազմակեր-  
պութեան գործին մէջ:

Պարագ կը զգանց Զեզի յիշեցնելու թէ իրեւ Նորակազմ Սիսկան  
Համայնք, պէտք է յանալ Զեր Հոկոզութեամբ յարգել մեր Թեմական հանձ-  
նադրութեան օրէնքները եւ Առաջնորդարանի Հրահանգները:

Կը յանձնարենք որ Զեր առամեայ Սիսկան Խորհուրդի դիւանի  
Առենապետին, Առենապիրին եւ Գանձապահին անուն-հասցէները Առաջնոր-  
դարան դրկէ փութով:

Այսու, կ'օրէնքներ զՁեզ, առամեայ Նորընաիր Սիսկան Խորհուրդը  
եւ Փիթսպէրկի մեր բարեպաշտ ժողովուրդը:

Մազթելով ամենուղ Աստուծոյ պարզեւները եւ օրէնութիւնները.

Հայրական սիրոյ ողջունի  
եւ օրէնութիւնները  
Աղօթարար

ՍԻԾՆ ԱՐՔԵՊԻԿՈՎՈՍ  
Առաջնորդ Հայոց Ամերիկայի  
եւ Գանատայի

Ph. fimbriatae sp.-typ. May 16, 1964.

Upstate. May 23, 1964.

Opposite

S. Upstate U. Up & beginning near Wadsworth

From about 10 miles away along N.Y. H. -

Opposite U. Soc. -

2/3 corporal surface, including 5 fm - types of U. glauca var.  
Second of 3 types of U. glauca var. 3-8-17, 6-18-19  
about 3 fm: upper part covered with longish hairs  
margin of face of each leaf has longish hairs  
about 1 mm. - 2 mm:

U. glauca var. esculentum, upper part of head like  
- top leaves, with a few of longish hairs covering  
leaves of same like U. glauca var. 3-8-17, 6-18-19  
about 1 mm. - 2 mm:

Second of 3 types of U. glauca var. esculentum, upper part  
of head like U. glauca var. 3-8-17, 6-18-19  
about 1 mm. - 2 mm: upper part of head like U. glauca var.  
about 1 mm. - 2 mm:

Upper, back of head, back of neck, back of neck, back of  
head like U. glauca var. 3-8-17, 6-18-19  
about 1 mm. - 2 mm: upper part of head like U. glauca var.  
about 1 mm. - 2 mm:

Wings 1 mm. - 2 mm, 3 mm. - 4 mm. Head 1 mm. - 2 mm.  
4-1/2 cm. long 1 mm. - 2 mm. 2-3 mm. Head 1 mm. - 2 mm.

frontal view, front of head like U. glauca var.  
upper part of head like U. glauca var. 3-8-17, 6-18-19  
about 1 mm. - 2 mm: upper part of head like U. glauca var.

frontal view, front of head like U. glauca var. 3-8-17, 6-18-19  
about 1 mm. - 2 mm: upper part of head like U. glauca var.

SHAHAN SEVHONKIAN, D. D. S.

PARAMOUNT BUILDING  
1501 BROADWAY (SUITE 1512)  
TIMES SQUARE  
NEW YORK 36, N. Y.  
CH 4-2299

WILLIAMSBURG SAV. BK. BLDG.  
1 HANSON PLACE (SUITE 1616)  
BROOKLYN 17, N. Y.  
CH 4-2299  
(NE 8-2228)

15 Ապրիլ 1964

Արժանապատիւ

Տէր Վրթանէս Աւագ Քահանայ Փափազեան  
Նախագահ Բիցպըրկի Հայ Եկեղեցւոյ Համայնքի 5 Ապրիլ 1964ի Անդամական ժողովին  
ի Լոնկ Այլ էնտ, նիւ Եօրք

Սիրելի Տէր Հայր,

Որպէս Առաջնորդարանին Կողմէ նշանակուած նախագահը՝ Բիցպըրկի  
Հայ Եկեղեցւոյ Համայնքին 5 Ապրիլ 1964ի Անդամական Ընդհանուր ժողովին,  
ձեզի կը փոխանցեմ ներփակեալ նամակը եւ կը խնդրեմ որ բարեհաճիք զայն  
ներկայացնել Առաջնորդարան՝ առ ի վաւերացում կատարուած օրինաւոր  
ընտրութեան:

Օրինաւորութիւնը հաստատող կան հետեւեալ կէտերը.-

1. Կանխաւ գրաւոր հրաւերներ դրկուած են Բիցպըրկի եւ  
Նրջակայքի բոլոր Հայերուն Կանոնագրի 12 յօդուածներով:
2. Հրաւերներուն մէջ օրոշապէս ըսոււած է թէ Ընտրութիւն պիտի ըլլայ:
3. Տրատու անդամներուն թիւը եղած է Տասն եւ ինը՝ ընտրութենէն առաջ:
4. Տասնեւիննին վրայ Տասն երեքը քուէարկած են: Յառաջացեալ  
ժամուն պատճառաւ Վեցը մեկնած էին առանց քուէարկելու:
5. Կատարուած է գաղտնի քուէարկութիւն:
6. Առաջնորդարանը կանխաւ տեղեակ պահուած է սոյն ընտրութեան՝  
գրաւորապէս:
7. Տէր Վրթանէս Աւագ Քահանայ Փափազեան Նախագահած է ժողովին՝  
Առաջնորդարանին իբր ներկայացուցիչ:

Նկատի ունենալով որ ամիսը անգամ մը միայն հանդիպում կ'ունենանք՝  
ամսուայ Ա. Կիրակին, Մասնաւոր կերպով կը խնդրեմ որ սոյն վաւերացումը  
տեղի ունենայ մինչեւ այս ամսուայ վերջը եւ մեզի տեղեկացուի պաշտօնապէս,  
որպէս զի կարելի ըլլայ Մայիս 8ի հանդիպումը աւելի արդիւնաւոր ընծայել:

Կանխայայտ շնորհակալութեամբ եւ

Որդիական ակնածանօք՝

Շահան Ալյոնիկ Ալյոնիկ

Շահան Սեւհոնկյան Սարկաւագ

4 կույր 1964

Հպիվ այր Լոյց

Յնչ ամսերը այ յառաք  
յօնաւորու որ կազմոց կրկնու  
հօր որ շարժումն է թե այսու  
և կրկնութե որ և այսու  
շարժութե արդյունք, այդու  
որ կրկնու հօր որ պայմանու այ  
հոյց ոչ այ բանութե Ի Տոյե  
Եթ կրկնութե այսու օչնու:  
որ որ ի որ խորի այ յօնաւոր  
որ որ այսու թե այսու:

Կրկնու հօր աշխատանք ի ամ թ  
ի այսու թե այ

1.- Ապահով շարժութե բանու  
կրկնու աշխատանք և մեջ կրկնու թ,  
2.- Եթ պահան կրկնու և մեջ,  
3.- Տոյե այ բանութե պահու  
կրկնու և մեջ,

4.- Եթ որ այսու թե պահան է  
որ կրկնու ան գոյց Լոյց կրկնու,  
կրկնութե թ ան այսու թե  
քու այսու այ յօնաւոր պահանու  
պահան ան այսու թե կրկնու  
պահութե պահութե այսու թե  
կրկնու թ այ կրկնու լուսութե,  
թ այսու թե պահութե պահութե

April 5, 1964

Dear Dr. Sevhonkian:

On April 5, 1964, I as elected temporary chairman of the day, with the presence of Reverend Papazian, called a duly organized meeting for the consideration of membership pledges in the Armenian Apostolic Church of Pittsburgh Pennsylvania from which resulted in nineteen pledging their membership. They are as follows:

Dr. S. Sevhonkian	Mr. & Mrs. Paslian
Mr. & Mrs. Michael Sakoian	Betty Sakoian
Stella Sakoian	Jack Kooshak
Mr. & Mrs. Richard Altounian	Mr. Paul Mouradian
Mr. & Mrs. Charles S. Klanian	Mr. & Mrs. Martin Tellalian
Mr. & Mrs. Marcos Mezian	Levon Tellalian

Mr. & Mrs. Joseph Jacobs

A vote was taken by the above members, and the following were elected to be on the Board of Trustees.

1. Michael Sakoian

3. Stella Sakoian

2. Marcos Mezian

4. Richard Altounian

5. Joseph Jacobs

Yours truly,

*Michael Sakoian*  
Michael Sakoian *ss*  
Chairman of the Day

MJS:ss

I confirm the above election and by a special letter proving its legality I forward it to Rev. V. Papazian, who presided the meeting as the official representative of the Arachnortaran, asking him to please present it to the Arachnortaran for approval of the Election.

*Dr. Shahan Sevhonkian*

Dr. Shahan Sevhonkian  
Deacon

Թիւ 11531  
Հոկտեմբեր 1, 1964

Սեծայարք  
Տօքթ. Եահան Սեւյոնցեան  
Նիւ Եռքք.

Ցարգելի Տօքթ. Սեւյոնցեան,

Շնորհակալութեամբ ստացուած է Զեր Սեպտեմբեր 15 թուակիր  
նամակը, ի մասին 90.00 տոլարի:

Հաճեցէք ներփակ գտնել վերոյիշեալ գումարին Համապատասխան  
փոխգիր մը, որ կը ներկայացնէ Առաջնորդարանի մէկ երրորդի մասնակ-  
ցութիւնը Բիցպըրկի Համայնքի այցելութեան Զեր ճանապարհանսին:

Մաղթելով Զեզի առողջութիւն եւ յաջողութիւն.

Մնամ խորին յարգանօք

Առքէն Սանուէլեան  
Դիւանապետ

OFFICE OF  
DR. SH. SEVHONKIAN  
DENTIST  
277 WEST END AVENUE  
NEW YORK

15 Սեպտեմբեր 1964

6821

Մեծայարդ  
Տիար Սուրէն Մանուէլեան,  
Դիւանապետ Առաջնորդարանի  
Աստ

Սիրելի Պ. Մանուէլեան,

Ներկայիւս կը փութամ ճշդել որ թէեւ Բիցպըրկի Համայնքի Լուրերուն Օգոստոսի թիւին մէջ Առաջնորդարանի հննսուն Տօլար ինծի խոստացածը իբր վճարուած ներկայացուած է, այդ ըրի պարզապէս Առաջնորդարանը փրկելու համար յապաղումի մեղադրանքէ՝ քանի որ 1964-1965ի նոր Տարեշրջանը արդ էն իսկ յառաջանալ սկսած է: Իրականութիւնը այն է որ հակառակ Մըրբազան Հօր պաշտօնական նամակին որ կը տեղեկացնէր թէ Երեսփոխանական ժողովը որոշած էր վճարել ինծի հննսուն Տօլար իբր մէկ երրորդի մասնակցութեան բաժինը Բիցպըրկի ճանապարհածախիս, ցարդ ոչինչ ստացած եմ:

Ենորհակալ կ'ըլլամ ուրեմն եթէ բարեհաճիք նկատել տալ առ որ անկ է, եւ եթէ տակաւին երկար պիտի ուշանայ՝ գէթ տեղեկացնել թէ երբ կրնամ յուսալ ստանալ այդ հննսուն Տօլարը:

Կանխայայտ շնորհակալութեամբ ու

Յարգանօք,

Զերդ՝

Ռ. Զահար Մյօրքուն

Բժ. Շահան Մեւյօնքեան

Հետու զայ թեր. Խոյէ-Վի առշնչակ  
ԱԱ.



ԱՌԱՋՆՈՒԹԱՐԱՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՑԻ

ԹՈՐԳՈՄ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿԻԱՆ

Առաջնորդ

# Diocese of the Armenian Church of America

630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016

★ MURRAY HILL 6-0710

Bishop Torkom Manoogian, Primate

Փետրուար 23, 1968

Մեծայարդ

Տիար Թրչըքս Ալբունեան  
Առեւտապահ Արքական Խորհուրդի  
Փիթողըքը Հայոց Համայնքի

Սրբելի Պատ. Ալբունեան,

Մեր Համայնքներու մէջ գործող Եկեղեցական կազմակերպութեանց վարչութեանց ստորագրութեամբ, յաճախ հրաւէր կը ստանանք նախագահելու իրենց կազմակերպած այլ եւ այլ ձեռնարկներու։

Անպատեհութեանց առաջքը առնելու համար կը հրահանգենք որ գրաւորապէս հաղորդէք Եկեղեցւոյդ մէջ Հոգեւոր Հովիւին նախագահութեան ներքեւ գործող եւ Ծխական Խորհուրդին Ենթակայ բոլոր մարմիններուն որ Առաջնորդարանին ուղղուելիք հրաւէրները կատարեն Հոգեւոր Հովիւին կամ Ծխական Խորհուրդին միջոցաւ։

Այս ուղղութեամբ Եկեղեցւոյդ կազմակերպութեանց ուղղած Զեր նամակէն հաճեցէք օրինակ մը մեզի ղրկել, նոյն էջին Վրայ նշանակելով անունները կազմակերպութեանց, որոնց վարչական մարմինը ստացած է Զեր հաղորդագրութիւնը։

Սիրոյ ողջունիւ  
/Dr. Dr. Ch. A. Manoogian/  
ԹՈՐԳՈՄ ԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ

On occasion, we receive invitations from the Executive Committee's of the church organizations of our communities to preside at their various functions.

To avoid irregularities we suggest that you instruct in writing the Church organizations functioning under the responsibility of the Parish Priest or Parish Council that any invitation to the Primate should be made through the Priest or Parish Council, as the case may be.

Please forward to us a copy of the letter sent to church organizations, indicating on our copy, the executive bodies of those organizations to whom the letters are sent.

With blessings,

Bishop Torkom

Թիւ 15244  
Նոյեմբերի 14, 1966

Բարեկանութէ  
ՀաՀան Առքաւագ Սեւյոնստան  
Նիւ Եղբա.

Միքայիլ Առևին Առքաւագ,

Առաջնարդ Արքան Հօր յանձնաբարութեամբ՝ այսու Ձեզի և  
զուհներ 90.00 առջարդ շե մը, իրքի պատուազին Փրցագործի հա-  
յունարդ Տառեցած Ձեր ծառայութեան:

Առջնուած Ձեզ առզնութիւն եւ յաջողութիւն:

Մամ իորին յարգանօք

Առարձն Առևին Առքաւագ  
Դիւնապետ

Armenian friends have  
FOR DR. SEVHONKIAN  
9 MRS. MARY NEB  
216 CHESTERFIELD RD.  
Pittsburgh 13, Pa.

OFFICE OF  
DR. SH. SEVHONKIAN  
DENTIST  
277 WEST END AVENUE  
NEW YORK

2 Augt 1966

Armenian

Dear Dr. Sevhonkian  
I am sending you a sample  
of my teeth having some difficulty  
in the top

Armenian  
top upper teeth,

through your kindness  
you can make a sample  
of my teeth for you  
to see, when I will be  
able to go to you  
for treatment,  
you can send me  
a sample of my teeth  
so that I can  
see what you  
can do for me.

With kind regards

Yours sincerely  
John H. K. 2pm

Թիւ 15235  
Նոյեմբեր 8, 1966

Բարեցնորհ  
Նուարշ Արդ. Սեւյոնքիան  
Նիւ նորա.

Սիրելի Նուարշ Մարկարագ,

Նոյեմբեր 2 թուուկի Զեր նամակը այսօր, Նոյեմբեր 7ին ստացայ,  
Հոկտեմբեր 3 թիւնեւսի նզած ըլլաւուն.

Եկեղեցւոյ բանակիները պատշաճ է որ Վերադարձուին Հայք Պրուր-  
սի Զեր ստորագրութեամբ, եւ եթէ Կը Փափառից, մեր Կողմէ եւս չեւր-  
Հոկտեմբեան նամակ մը յարմար է որ պրուի, յայտնելով որ Կրկին պի-  
տի պիտինց իրենց ստանդակութեան, երբ Առաջնորդը նոր նրագիր մը կազմէ  
եկեղեցական պաշտամունց հասարելու մասին Փիցարկի մեր համայնքին  
համար.

Առաջին տարիով Զեր անունից պիտի զրկուի 90 տուարը չեցը զար Զեր  
նախարդ նամակին մէջ յիշած էիս.

Կը յուսունք որ Նոյեմբեր 6ին կատարուած Կրօնական պաշտամունքը  
անգիր ունեցաւ կարծի պաշտամութեամբ ի մինիթարութիւն Զեզ եւ համայնքին:

Այս տարիօվ Կրկին կը զնահանենց յարդ կատարած Զեր ծառայութիւնց,  
մաղթելով Զեզ եւ Զրկին Սեւյոնքեանի անշառողջութիւն հազոր եւ մարմնոյ,  
որպէս զի շարունակեց Զեր ծառայութիւնը Հայք. Եկեղեցւոյ մէջ, ուր ոք  
ասիթք ներկայանայ:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՒ ՇԳԻՍԿՈՅՈՒ  
Առաջնորդ

Թիւ 15190  
Հոկտեմբեր 24, 1968

Ապրձնարք  
Տաճան Արկա Մելիքյանին  
Նիւ ծորս.

Այսօր ի առ հաջորդ պատճեն ան առ առ գույքը անձնեցը

է 7 Հոկտեմբեր 1968 թվականի ան նախական ներկայականներով:

Կը զաւինք որ առերի քերումն պիտի չկը նայ շարունակի: Ան օգտակար ծառայութիւնը օֆիցիութիւն է ան համայնքին, որուն կազմակերպութիւն ունի ի առ կարծեար շափու մը:

Կը զնաւումն ան նույրումն ու նախական ներկայականներին, որուն տարուած, անցնաղ շաւրչ կինդ տարուած քննութիւն, ան առքական այլ ուժիւններուն առիր առեղծեցը որ հոգեւոր նախարարութիւն արուեր համայնքի ժողովարքին, ինչու նաև ազնուածար կազմակերպութիւն քայլեցը, եկամուտայ վարժարանն ու Այ պարզը ու Հրատարակի թերթիկը:

Վաղօրենք որ Առուած վարձակալու ուսայ Ձեզ եւ կը մազ-  
բենք ան առաջաւելին ու յաշազութիւն

Արքյ պետական  
Ե օրբեաւթամբ

ՊՈՂՈՄ ԵԳԻՍԿՈՎՈՒ  
Ապաշխարք

OFFICE OF  
**DR. SH. SEVHONKIAN**  
DENTIST  
277 WEST END AVENUE  
NEW YORK

7 Հոկտեմբեր 1966

Գերաշնորհ

Տէր Թարգոմ Սրբազն Եպիսկոպոս Մանուկեան  
Բարեխնամ Առաջնորդ Ամերիկայի և Գանատայի Հայոց  
ի նիւ Եօրք

Գերաշնորհ Սրբազն Հայր,

Գանթարճեաններուն տունը մեր Վերջին տեսակցութենէն ետք, հեռաձայնեցի  
Սակածեանի և գրեցի Ալթունեանի՝ 1 Սեպտեմբերին, ստացայ պատասխան 7 Սեպտեմ-  
բերին, գացի Բիցպըրկ 10-11 Սեպտեմբերին և Բիցպըրկի Վերջին այցելութիւնս  
պիտի ըլլայ նոյեմբեր 6ին:

Առ ի գիտութիւն, ուրեմն, կը կցեմ պատճենները հետեւեալներուն.-

1. Ալթունեանի Օգոստոս 24ի նամակ :
2. Իմ Սեպտեմբեր 1ի նամակ :
3. Ալթունեանի Սեպտեմբեր 7ի քարտ-նամակ :
4. Հրաւեր Սեպտեմբեր 11ի և "Համայնքի Լուրեր" Յունիս, Ցուլիսք  
Օգոստոս եւ Սեպտ. 1966
5. Իմ նամակ Սեպտեմբեր 21ի :
6. Բօքսան Սառօնեանի գնահատական նամակ :
7. "Համայնքի Լուրեր", Հոկտեմբեր 1966 :
8. Ալթունեանի նամակ՝ Սեպտեմբեր 26 :
9. Իմ նամակս Ալթունեանի՝ Հոկտեմբեր 9 :
10. Իմ նամակս՝ 12 հոգիի, Հոկտեմբեր 9 :
11. Կտակագիր նամակ մը Ոմնէ՝ 8 նոյեմբեր:

Այս Վերջինը պիտի կարդացուի նոյեմբեր 6ին և պիտի տպուի Դեկտեմբերի  
Համայնքի Լուրերուն մէջ: Եթէ մինչեւ այդ թուականը հրաժարականս ընդունող  
Ձեր նամակը հասնի և պատճէն մը զրկուի Ալթունեանի՝ նոյեմբեր 6ին կարդալու  
թելագրանքով, անշուշտ ան ալ կը կարդացուի եւ կը տպուի Դեկտեմբերի Համայնքի  
Լուրերուն մէջ: Նատ հաւանաբար այդ թիւը՝ Ե. Տարի Թիւ 12 --60-- Վերջինը  
ըլլայ իմ պատասխանատուութեամբ հրաժարակուածներուն:

Որդիական Ակնածանօք

Մատչելով ի Սուրբ Աջն Զեր  
Հակոբ Ակոսյան

Ք. Ա. Սեպտ. 11 եւ նոյ. 6ով Առաջնորդարար

Տահան Սեւյթեան  
առ ինծի կ'ըլլայ ինսուուն Տօլար:

OFFICE OF  
**DR. SH. SEVHONKIAN**  
DENTIST  
277 WEST END AVENUE  
NEW YORK

1 Սեպտեմբեր 1966

Գերացնորհ

Տէր Թորգոմ Սրբազն Ծպիսկոպոս Մանուկեան  
Նորը Նոտիր Առաջնորդ Ամերիկայի եւ Գանատայի Հայոց  
ի նիւ Եօրք

Գերաշնորհ Սրբազն Հայր

Որպէս Սարկառագր Բիցպըրկի Հայ Եկեղեցւոյ Համայնքին, նախ կը փութամ  
շնորհաւորել Զեր ոնտութիւնը եւ կը մաղթեմ կարողութիւն ու արեւշառութիւն՝  
կարենալ զիմաւորելու համար Զեր Վրայ ծանրացող ծանր պատախանատու ութիւնները։

Երկրորդ՝ բարիկալուստ կը մաղթեմ Զեզ՝ օգոստոս 24ին Զեր նիւ Եօրք  
ժամանումին առթիւ։

Երրորդ՝ բոլորած ըլլալով ամբողջ Հնդամեակ մը Բիցպըրկի մէջ իբր  
Սարկառագր իմ ծառայութեանց՝ Սիոն Սրբազն Արքեպիսկոպոս Մանուկեանի  
Թոյլտուութեամբ եւ քաջալերութեամբ, այժմ երբ Առաջնորդական աթոռը Զեզի  
կը փոխանցուի՝ պարտք կ'զգամ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼ ՀՐԱՄԱՐԱԿԱՆՍ՝ ինծի շնորհուած  
՝ Բիցպըրկի Հոգեւոր Մատակառար՝ հանգամանքն, Զերդ Սրբազնութեան Առղելով  
յետ այսու բատ Զեր նախասիրութեանց պարտն ու պատշաճը տնօրինել։

Այդ Հինգ տարուան ընթացքին, չեմ կրնար ըսել թէ ամէն ինչ պայծառ  
ու անսխալ էին, եւ չէին ալ կրնար ըլլալ՝ քանի որ ոչ ոք է անսխալ։ Սակայն  
գէթ խղճի ամենայն հանդարտութեամբ կրնամ ըսել թէ լաւագոյն կարելիս  
չխնայեցի յօդուտ մեր զարաւոր Մայր Եկեղեցիին, մեր Մայրենի Լեզուին եւ  
Բիցպըրկի Հայութեան ներկային ու ապագային։

Նաեւ պարտք կ'զգամ յայտարարել թէ իմ ջանքերն ու զոհողութիւնները  
պիտի չկրնային ըլլալ այնքան արդիւնաւէտ՝ եթէ չունենայի իմ կռողըն  
անձնուէր ծառայութիւնները, զոհողութիւնները եւ բոծակցութիւնը  
մասնաւորաբար հետեւեալներուն։ Ռէվերընտ Պրուքս, Պ. Մարթըն Թէլլալեան,  
Տիկ. Աննա Սագուեան, Տիկ. Արաքսի Թէլլալեան, Պ. Ռիչըրտ Ալթոււնեան,  
Օր. Սթէլլա Սագուեան, Պ. Մկրտիչ Սագուեան, Պ. Ճօզեֆ Ճէյքս, Պ. Մաստիոս  
Մեզեան, Պ. Գէորգ Թակորեան, Պ. Հայկ Կարապետեան, Պ. Լեւոն Թէլլալեան,  
ինչպէս նաեւ շատ մը ուրիշներու։

Սէնթ Անտրոււզ Ծպիսկոպոսական Եկեղեցւոյ քանալիները որ ինչի յանձնուած  
են Հինգ տարի առաջ տակաւին կը մնան իմ քով մինչեւ որ Հրաժարականս վաւերացնէք,  
որմէ վեզի գնուն զանոնք կը վերադարձնեմ Ռէվերընտ Պրուքսի՝ որ այնքան  
ազնուօնէս աւո գործակցեալ մեզի։

Լաւագոյն բարեմաղթութիւններով եւ

Որդիական ակնածանօք  
Մարտչելով ի Սուրբ Աջն, Զերմա այսու

Զ.Գ. Սրբազն Հայր,

Վերոյիշեալ հրաժարագիրս ամենապատշաճ ձեւն է որ կրցայ մտածել Ներկայացուելու համար հանրութեան՝ Բիցպըրկի Շամայնքի Լուրերի հետ Սեպտեմբերի թիւին մէջ:

Կ'զբամ թէ գոհ չէք մնար Եկեղեցւոյ ամենախոնարհ մէկ ծառային հսկ Հրաժարումը լսելով։ Այո, ես իսկ պիտի չփափաքէի հրաժարիլ այլ ընդհակառակը պատրաստ էի աւելցնել ճիգերս ու գոհութիւններս։ Ատոր պացոյցն է այն նամակը որ պատրաստեցի, ուղղեալ Ձեզ Սրբազնութեան եւ դրկեցի Բիցպըրկ որ ստորագրուի եւ Ձեզի ուղարկուի։ Նսեւ պատրաստուելու վրայ էի Սեպտեմբեր 11ին այցելելու Բիցպըրկ, Յուլիս եւ Օգոստոս ամիսներու երկար դադարէ մը վերջ, նոր տարեշրջանի մը առաջին ժամերգութիւնը կատարելու։ Սակայն Պ. Ալթունեանին նամակը՝ զոր կը ներփակեմ վերադարձնելու խնդրանքով — ի հարկին շատ զիւրաւ կրնամ նկարը առնել եւ դրկել — գիս կը մզէ այլեւս բողելու որ ինձմէ տարբեր անձեր ճշդեն Բիցպըրկի համայնքին առնելիք քայլերը՝ իրենց իսկ պապային համար, իրենց իսկ փափաքած ձեւով...։ Այսուհանդեռձ, ճշդեմ մի քանի կէտեր ի պատասխան նամակին ամբաստանութեանց...։ Սախ՝ առաջին օրէն Հերձուածի տգեղ իրողութիւնը լուս կերպով գոյութիւն ունի, որուն իբր հետեւանք ոմանք Հինգ տարուան մէջ մէկ անգամ իսկ չեն եկած Եկեղեցի։ Երկրորդ՝ ճիշդ է թէ յաճախ նախաձեռնող եղած եմ, սակայն առ ի չգոյէ լաւագոյնին ինչպէս եւ կանոնառուոր ժողովներու՝ նախաձեռնութեանս հետեւանք տուած եմ, կարեւոր առիթներով միշտ Առաջնորդ Սրբազն Հօր հետ խորհրդակցաբար։ Երրորդ՝ ոչ ոք անսխալ է եւ կրնամ ես ալ ոմանք վիհաւուած ըլլալ։ Սակայն երբ գրաւոր կերպով ներողութիւն խնդրելու չափ համեստութիւնը ունեցած եմ։ այլեւս դիտումնաւոր եւ Եկեղեցին վնասակար միայն կրնամ նկատել զայն մատի փաթուց ընել, առանց նայելու թէ այդ վիրաւորանքին մէջ իսկ կային կարեւոր կէտեր՝ ինչպէս գանձապետին թելառուելս թէ հաշիւները պարտի նորընտիր Գանձապետին փոխանցել, եւայլն։ Չորրորդ՝ նիւ Եօրքէն գալ եւ հեռու մնալ տրամաբանական չէ։ Այդ եղած է՝ կամ ժամերգութեանց նախորդող Շաբաթ օրուայ Հայերէնի դասի աշակերտներուն կամ ծնողացը ցոյց տուած անտարերութեանը իբր հետեւանք եւ կամ, ինչ որ Յունիս 26ին պատահեցաւ առաջին անգամ։ Շաբաթ 25ին չկրցայ երբալ չափազանց տառապողներ խնամելուս պատճառաւ եւ գիշերուայ գնացք մը առի, կը յուսայի գէթ Կիրովի առաւօտ ժամանել, սակայն ՚Կրէյհառւնտ Պրս՛ի փոքրիկ արկած մը պատճառ եղաւ երկար յապաղումի եւ Եկեղեցին սկսել է կէս ժամ առաջ միայն ժամանեցի։ Իբր վկայ՝ Սագօեանին քոյրը նոյն արկածեալ ՇՊՍ ին մէջն էր։

Իսկ կարեւորագոյն կէտը այն է որ ոմանս, չգիտեմ ինչ դրդապատճառներով, կը պնդեն առաւել քան տարի է մը ի վեր թէ ամիսը մէկ անգամ, Յուլիս եւ Օգոստոսը առձակուրդ ըլլալով Հանդերձ, չափազանց շատ է Հայ Եկեղեցիի համար եւ կ'առաջարկեն տարին Հինգ կամ Երես անգամ միայն ունենալ եւ ես առաջին օրէն բացարձակ հակառակած եմ ու մէջը դադրեցնելու համար ըսած եմ որ ես իրենց ենթակայ չեմ այլ Առաջնորդ Սրբազն Հօր։

Այս առթիւ կը փափաքիմ տեղեկացնել նաեւ թէ անցեալ 1965-1966 տարեշրջանի ընթացքին Բիցպըրկ այցելած եւ Պատարագիչով կամ առանց Պատարագիչի ժամերգութիւնները վարած եմ Եօթն անգամ, ամիսը մէկ անգամ, ակամայ զանց առնելով Յուլիս, Օգոստոս, Դեկտեմբեր, Յունվար եւ Սայիս ամիսները։ Իւրաքանչիւր անգամ ՚Կրէյհառւնտ՛ ովկ երթ ու դարձի լոկ ճանապարհածախսս եղած է Երևանու Տօլար, որուն Տասը ես խոստացած եմ յանձն առնել, Տասը Համայնքը խոստացած է վճարել սակայն չփառագո, իսկ Տասը Առաջնորդարանը խոստացած է յանձն առնել, որով այս հիման վրայ Առաջնորդարանը ինձի պարտական կ'ըլլայ Եօթանասուն Տօլար։

Տօլար

Նոյն